

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

# ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՆԵՐՍԷՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ (1770—1857)

Հոկտեմբերյան այս օրերին մեր ողջ հանրապետությունում և միութենական բազում քաղաքներում հանդիսավորությամբ և լայնորեն նշվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միավորման 150-ամյակը, որպես հայ և ռուս ժողովուրդների եղբայրության, անխախտ միասնության և, միաժամանակ, հայ մշակույթի և արվեստի փառատոն:

Այս պատմական հանդիսությանը Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս, Հայոց Հայրապետի նախագահությամբ և Նրա ողջույնի խոսքով («Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 12), բերեց իր օրհնությունը, հոկտեմբերի 3-ին, Վեհարանի դահլիճում գումարված հանդիսավոր նիստով, որին ներկա էին նաև սփյուռքի թեմերից Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակին և գահակալության 23-րդ տարեդարձին ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած բարձրաստիճան հայ հոգևորականներ և աշխարհական պաշտոնական անձնավորություններ:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակի հանդիսությանը մասնակցող ռուս և վրաց եկեղեցիների պատվիրակություններ:

Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ շրջադարձային նշանակություն ունեցող պատմական իրադարձություն էր, որով Արևելյան Հայաստանի հայությունը փրկվեց ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից: Նրա առաջ բացվեցին ազգային համախմբման հնարավորություններ, նախադրյալներ ստեղծվեցին նաև արևելահայության եկեղեցական-մշակութային, հասարակական և տնտեսական զարգացման համար նրա պատմական ճակատագրում՝ նրան ազատելով պարսկական դարավոր տիրապետության դաժան լծից:

Այս հաղթանակը ձեռք բերվեց հերոսական ջանքերով ռուս և հայ զինվորների անձնազոհ պայքարի, համատեղ թափված արյունի:

Կիլիկիայում 1375 թվականին մեր վերջին պետականության՝ Ռուբինյան թագավորության անկումով հայ եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, փաստորեն իր ձեռքում էր կենտրոնացրել նաև հայ ժողովրդի քաղաքական առաջնորդությունն ու ղեկավարությունը, որպես «Հայոց կրոնական համազգային կենտրոնի», մանավանդ ԺԵ—ԺԸ դարերում, երբ հայ ժողովրդի արևմտյան և արևելյան հատվածները հեծում էին օսմանյան և պարսկական լծի տակ:

Հայ եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի ղեկավարության ներքո, սրբությամբ և պատվով կատարեց իր հայրենասիրական, քաղաքական փրկարար այս առաքելությունը մեր ժողովրդի կյանքում:

ԺԵ—ԺԸ դարերում հայ ազատագրական շարժման պատմության մեջ իրենց հայրե-

ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

նասիրական-քաղաքական գործունեությամբ երախտագիտությամբ են հիշվում անունները **Ստեփանոս Սալմաստեցի, Միքայել Սեբաստացի** (ԺԶ դար), **Հակոբ Դ Ջուղայեցի** (ԺԷ դար), **Հակոբ Շամախեցի, Սիմեոն Երևանցի** (ԺԸ դար) կաթողիկոսների և **Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի** (1780—1800), որոնք հայ ազատագրական շարժման երկարատև և անարդյուն փորձերից հետո հայ ժողովրդի ազատագրության հույսը կապեցին Ռուսաստանի հետ[1]:

«Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը ունեցել է պատմական առարկայական արմատներ, որոնք ձևավորվել են 16-րդ—18-րդ դարերում մի շարք հայոց կաթողիկոսների ջանքերով: Այդ կողմնորոշումը վեր է ածվել ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության»:

Արդարև, քրիստոնյա Ռուսաստանն էր ա՛ն միակ և հուսալի ուժը, հզոր պետությունը, որը կարող էր հաջողությամբ պսակել հայ ժողովրդի ազգային-ազատագրական հույսերը:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրով «1768 թվականը կրնանք նկատել իբր հիմն և արմատ այն սերտ հարաբերության, որ հաստատվեցավ Հայոց կաթողիկոսության և Ռուսաց կայսրության միջև որ հառաջանալով և աճելով հանգեցավ ռուսական տիրապետության Հայաստանի մի լավ մասին և մի լավ կեսին վրա»[2]:

Քաղաքական այս նոր կողմնորոշման և Արևելյան Հայաստանի Ռուսաստանի հետ միավորման պատմական իրադարձության մեջ, 1826—1827 թվականներին, ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ, վճռական դեր կատարեց Մայր Աթոռի միաբան, վրահայոց թեմի առաջնորդ տ. Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, որը պատմության անցավ որպես Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցի, **Պաշտպան հայրենյաց** տիտղոսով:

Հայրենասիրությունը Աշտարակեցու հոգու ամենախորը հրայրքն է եղել դեռևս Էջմիածնում, ուսանողական, երիտասարդական տարիներից:

**Աշտարակեցին միշտ մտածել է «ի փառաց զրկեալ ողորմելի» մեր հայրենիքի և ազգի «ապաբախտության» մասին և ծրագրել է հայ ժողովրդի ազատությունն ու ազատագրումը իր «բազմամեայ փորձառութեամբ» և «հարուստ յուսով անկասկածելի հովանաւորութեանց ամենաբարեպաշտ հըզօր Տէրութեան Ռուսաց»,** ինչպես ինքը վկայում է նախարար Բլուդովին գրած իր նամակում:

1850 թվականի մարտի 11-ին կոմս Վորոնցովին գրած իր նամակում Աշտարակեցին վկայում է նաև, որ 1825 թվականին Էջմիածին է այցելում Հնդկաստանից եկած անգլիացի միսիոնար Ժոզեֆ Վոլֆը, որը Եփրեմ կաթողիկոսին և իրեն առաջարկում է ընդունել անգլիական հովանավորությունը: Աշտարակեցին հանուն կաթողիկոսի և Մայր Աթոռի Վոլֆին տվել է հետևյալ կտրուկ և ճշգրիտ պատասխանը.

**«Դեռ 200 տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն Ռուսաց պետությունից, թե մեր նախնիքներն ու հայրերը, չարժանանալով այդ հովանավորության, կտակեցին իրենց երախաներին թե երբ կգա այդ հովանավորությունը, հայտնեն իրենց գերեզմաններին և այն ժամանակ կհանգստանա իրանց աճյունը: Եվ այժմ, երբ արդեն եկել է մեզ մոտ սպասվող հովանավորությունը և մենք բախտ ունենք նրանից օգտվելու, էլ ի՞նչ կարիք կա ուրիշ պետության հովանավորությունը որոնելու: Ռուսաց կայսրը ինքը հոգ կտանի հայ ժողովրդի բարօրության մասին և Նորին Մեծության բարձրագույն հովանու տակ ես ինքս կարող եմ ամենուրեք, ուր որ հարկավոր է, հիմնել և բաց անել դպրոցներ, որոնց մեջ կավանդվեն հայոց դավանությունն էլ, լեզուն էլ, մի խոսքով, Ռուսաց կառավարությունն ինքը կանի մեզ հայերիս համար այն ամենը, ինչ կարող է ամրապնդել հայ ժողովուրդի բարեկեցությունը և բարօրությունը»[3]:**

Աշտարակեցին ծնվել է 1770 թվականի փետրվարի 13-ին Արագածոտն գավառի Աշտարակ գյուղում, հայ քահանայի ընտանիքում:

Աշտարակեցու հայրը՝ տ. Հարությունն քահանան, «ջաղացպանութենեն եկած, աղքատ դասակարգի կպատկաներ»[4]:

Աշտարակեցին իր նախնական կրթությունը ստացել է իր կնքահայր տ. Գալուստ արքեպիսկոպոսի մոտ և ապա, որպես «ս. Էջմիածնի իշման տեղին նվիրված ուխտի գավակ», ութ տարեկան հասակում ընդունվում է Սիմեոն Երևանցու օրոք Մայր Աթոռում բացված Ժառանգավորաց վարժարան:

---

[1] «Էջմիածին» ամսագիր, 1978, № Է, էջ 20—28, № Ը—Թ, էջ 72—73:

[2] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, հատոր Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 3057:

[3] Գործ Հայրապետական դիվանի, 1845, № 12: Տես նաև **Լեո**, Պատմութիւն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 96—97:

[4] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 3299:

Աշտարակեցին ֆիզիկապես եղել է «վըտիտ, նիհար, կարճահասակ, բայց ուսման մեջ հառաջադեմ, աշխույժ և կրակոտ, սրամիտ և հնարագետ, զարմանալի հիշողության տեր, աշխատասեր, ընթերցասեր»[5]:



Ներսես Ե Աշտարակեցին, ի գլուխ Մայր Աթոռի միաբանության, դիմավորում է ռուսաց զորքին և հայ կամավորական գնդին (1827 թ. օգոստոս)

Աշտարակեցին 12 տարի սովորում է Մայր Աթոռի Ժառանգավորաց վարժարանում: 1791 թվականին սարկավագ, 1796-ին վարդապետ է ձեռնադրվում: «Հասակով ու կազմով այս մանր մարդու... հոգվով ու սիրտով մեծամեծներու ձգտող և գործունեությամբ չափ ու կոպար չգիտցող» (Օրմանյան, նույնը) Աշտարակեցու առաջ բացվում է վանական-վարչական, կրթական ու հայրենասիրական գործունեության լայն ասպարեզ:

1814 թվականի մարտին Աշտարակեցին, 44 տարեկան հասակում, իր հոգևոր ու իմացական ուժերի ծաղկման և հասունության շրջանում, նշանակվում է վրահայոց թեմի առաջնորդ և 1826—1827 թվականներին, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, վճռական ու պատմական դեր է կատարում այդ իրադարձության մեջ:

Այս առթիվ նա իրավամբ իր կատարած հայրենասիրական մեծ գործունեության համար կոչվում է **Պաշտպան Հայրենեաց:** Այս ճշմարիտ բնութագիրը արտահայտությունն է հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքների և խտացնում է իր մեջ Աշտարակեցու հայրենասիրական ողջ գործունեությունը:

Մինչև ԺԹ դարի առաջին քառորդը Հայաստանը գտնվում էր Պարսկաստանի և Թուրքիայի լծի տակ: Այս շրջանը մեր պատմության ամենադաժան և մռայլ ժամանակահատվածն է համարվում:

Թուրքիան և Պարսկաստանը հրով և սրով նվաճել էին մեր երկիրը և բաժանբաժան արել այն: Հայաստանը տնտեսական հարստահարություններից և քաղաքական ծանր ճնշումից բացի ենթարկվում էր նաև ազգային-կրոնական հալածանքների, ֆիզիկական բնաջնջման և ձուլումի:

Նկարագրելով այդ շրջանում հայ ժողովրդի ապրած ծանր վիճակը, նրա ցավերով այրվող Խաչատուր Աբովյանը գրում էր. «Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղուշաղը, չես իմանում, թե ո՞ւր ես, երկրո՞ւմը, թե դժոխքումը»:

ԺԹ դարի առաջին քառորդին ուժեղանում է Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը պարսկական և թուրքական տիրապետության դեմ: Դրան նպաստում էր նաև Ռուսաստանի վարած արևելյան քաղաքականությունը: Այդ գործում Ռուսաստանը հենվում էր Անդրկովկասի ժողովուրդների աջակցության վրա:

Անդրկովկասի ժողովուրդները իրենց ազատագրական պայքարի բախտը վաղուց ի վեր կապել էին Ռուսաստանի օգնության

[5] **Ալեքսանդր Դ Երիցեանց,** Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 2:

հետ: Արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում նրանց շահերը համընկնում էին միմյանց:

1800—1813 թվականներին շարունակվում են ռուս-պարսկական առաջին կռիվները:

Ի վերջո 1813 թվականի հոկտեմբերի 12-ին կնքվում է Գյուլիստանի (Ղարաբաղ) դաշինքը[6]:

Գյուլիստանի պայմանագրով թեև ավարտվեց ռուս-պարսկական պատերազմը, բայց կայուն խաղաղություն և դրացիական բարի հարաբերություններ չհաստատվեցին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև:

Եվրոպական պետությունները, հատկապես Անգլիան և Ֆրանսիան, ակտիվ կերպով միջամտում էին Պարսկաստանի ներքին գործերին և նրան հրահրում նոր պատերազմի: Իսկ Պարսկաստանը ձգտում էր խլել իր կորցրած հողերը և կրկին ամրապնդել իր դիրքերը Անդրկովկասում:

1826 թվականի հունիսի 18-ին Պարսկաստանի Աբբաս-Միրզա թագաժառանգը 60 հազարանոց բանակով ներխուժում է Ղարաբաղ, Գյուլիստանի դաշինքը վերանայելու ձգտումով:

Պարսկական զորքերի ներխուժումը չափազանց ծանր դրություն է ստեղծում, մանավանդ հայերի համար: Պարսիկները «Հայերին դիտում էին իբրև» Ռուսաստանի բնական դաշնակցի և ձգտում էին ֆիզիկական բնաջնջման միջոցով «վերջ տալ նրան» (Գ. Ա. Գալոյան, նույնը, էջ 189):

Թշնամու առաջին իսկ հարվածները մեծ վնասներ են հասցնում հայ ժողովրդին:

Երևանի Հյուսեին խանը և մանավանդ նրա եղբայր Հասան խանը իրենց ողջ ատելությունը թափում են հայերի վրա, որպես Ռուսաստանի հավատարիմ տարրի. «Ով էս սրհաթը Երևան է մտել,—գրում է Աբովյանը,—հենց կիմանար թե ցրհեղեղը նոր ա եկել, աշխարհքս քանդել: Ապարանը դառել էր դասապիսանա: Օր չէր ըլում, որ սարից, չոլից մարդ չի բռնեն ու Հասան խանի առաջ չբերեն: Առանց մարդ սպանելու, մեկ օր աչքը չէր կպցնում, քար չկար մեր երկրում, քոլ չկար, որ հաի արնով ներկած չըլի, սրանց ամեն մեկի սրտում հազար թուր կա ցցած»:

Օրհասական այս վտանգից ազատվելու համար հայ ժողովուրդը իր ողջ հույսը դրել էր Ռուսաստանի վրա:

1826 թվականի հուլիսի վերջերին Թիֆլիսում կառավարչապետ, գեներալ Ա. Պ. Երմոլովի մոտ հրավիրվում է ռազմական խորհուրդ, որին մասնակցում է նաև Ներսես Աշտարակեցին: Նրան վիճակվել էր այդ վճռական պահին կատարել հայրենասիրական, փառավոր և հերոսական գործունեություն:

Աշտարակեցին 1826 թվականի հուլիսի 29-ին, ռազմական խորհրդից հետո, մի հայրենասիրական, կրակոտ շրջաբերական կոչով, հայոց պատմության հերոսական դրվագների ոգեկոչումով նկարագրում և շեշտում էր ստեղծված վտանգավոր և օրհասական կացությունը, դիմում էր «պատվական հայոց ազգին, որ միշտ հավատարիմ հպատակ է եղած քրիստոսասեր կայսրությանն ռուսաց և բնակվում է Թիֆլիսում, Ելիզավետոպոլում, Ղարաբաղում, Նուխիում, Շամախում, Բաքու, Դերբենտ, թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում, հոգևորականաց և աշխարհականաց», որ զենք վերցնեն հասարակաց թշնամու՝ պարսիկների դեմ Մակաբայեցիների և Վարդանանց հերոսական օրինակով. «Մեռցուք քաջութեամբ ի վերայ եղբարց մերոց և մի՛ խառնեսցուք զանուն վատութեան ընդ արութիւնս քաջութեան... եւ այդպիսով ժառանգեսցուք մեր նախնեաց պանծալի անունն ու փառքը»: «Մեր ազգի հավատարմությունը,—շեշտում էր Աշտարակեցին,—անսասանելի է... հայտնի է ձեզ նաև Ռուսիո օգոստափառ պետության նպատակը: Նա յուր հզոր բազուկը տարածեց մեր հայրենյաց վրա, ոչ այնքան յուր սեփական օգտի համար, որքան մեր անդորրության և բարօրության և Քրիստոսի սուրբ կրոնը և եկեղեցին պաշտպանելու համար...:

«Պարսիկները մտնելով Ռուսիո կայսրության սահմանները և խույս տալով ռուսական սահմանապահ զորքերից, ավազակաբար հարձակվում են գյուղերում առանց ամենայն նախազգուշության բնակվող հայոց վրա, նոցա գերի են տանում և անողորմաբար տանջում»:

Աշտարակեցին սիրտ էր տալիս, քաջալերում և հորդորում. «Մի՛ վախեցեք պարսից ձայնից և աղաղակներից: Նոցա ուժը ճչի և սպառնալիքի մեջ է և ոչ թե ճշմարիտ զորության և խելացիության:

Արիացե՛ք, մի՛ վախեք: Նոցա հանկարծակի հարձակումը անզենք և խաղաղ շինականաց վրա՝ չէ կարող սասանեցնել Ռուսիո օգոստափառ կայսեր անհաղթելի զորաց: Հաստա՛տ մնացեք ձեր հավատարմության մեջ: Աշխատեցե՛ք խոհեմությամբ անմահացնել և փառավորել ձեզ և ձեր նախնյաց հիշատակը ցկատարած աշխարհի...

Դիմադրեցե՛ք թշնամուն և սորա արբանյակներին, կա՛մ ռուսաց զորքերի հետ միա-

---

[6] Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 185—186:

սին և կա՛մ թե մի ուրիշ կերպ... Իսկ եթե հարկ լինի՝ մի՛ խնայեք ձեր արյան վերջին կաթիլը»:

## ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1826 թվականի աշնանը ռուսական զորքերը փայլուն հաղթանակներ են տանում հայերի, վրացիների և ադրբեջանցիների ակտիվ մասնակցությամբ Անդրկովկասս ներխուժած պարսկական բռնակալների դեմ:

Օրակարգի վրա էր դրված Երևանյան արշավանքը, որը նախապատրաստվում էր ամենայն մասամբ:

1826-ի վերջերին և 1827-ի սկզբներին Երևանյան արշավանքի նախապատրաստությունը մեծ ոգևորություն էր ստեղծել մանավանդ հայերի մեջ:

Դա փրկարար արշավանք էր համարվում, որը վերջ պետք է դներ Հայաստանի ազատագրությանը պարսկական դաժան լծից:

Ներսես Աշտարակեցին առաջիններից մեկը եղավ, որ **խոսքից անցավ գործի**: Նա մինչև ռուսական բանակի ժամանումը; Թիֆլիսում և այլ քաղաքներում Հարություն վարդապետ Ալամդարյանի գործակցությամբ կազմակերպեց հայկական կամավորական ջոկատներ, որոնք հերոսաբար դիմադրում են պարսկական հարձակումներին և ապա մասնակցում Երևանյան արշավանքին:

Հայկական կամավորական այդ ջոկատները ունեին իրենց առանձին կանոնադրությունը, ազգային դրոշակ և հայ հրամանատարներ:

Կամավորական ջոկատների մեջ ընդունվում էին 17—30 տարեկան հայորդիներ, իրենց ազատ կամքով: Նրանք երդվում էին հավատարմորեն ծառայել մինչև պատերազմի վախճանը:

1827 թվականի մարտին Թիֆլիսում կազմվում է հայ կամավորների առաջին ջոկատը: Մայիսին կամավորական ջոկատներում ցուցակագրվել էին 600 մարդ: Մինչև Երևանյան արշավանքը կամավորական գնդերում ծառայող հայ երիտասարդների թիվը հասնում է 12.000: «Ռուսական ջոկատներում մասնակցում էին հայկական մի բանի դրուժինաներ, թվով 12.000 մարդ, որոնց առաջնորդում էր Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին»[7]:

[7] Նույնը, էջ 195:

մը ունեցավ համազգային և պետական մեծ նշանակություն: Այն արժանացավ նաև Ռուսական կառավարության բարձր գնահատանքին և խրախուսանքին:

1827 թվականի մարտին արդեն պատրաստ էր Աշտարակեցու կազմած հայագունդը, Երևանի վրա գնալու համար:

Մարտի 30-ին Թիֆլիսում կատարվում է հանդիսավոր զորահանդես: Աշտարակեցին ձիու վրա նստած, «արտաշարժ ճառով ոգևորեց յուր զինվորներին, օրհնեց և հրամայեց անցնել յուր առաջ քանի մի անգամ ռազմավար ձևով: Տեսարանը աքանչելի էր: Այեզարդ եպիսկոպոսիս «ապրի՛ք, քաջեր, շնորհակալ եմ» ձայն տալուն՝ երաժշտությամբ անցնող գունդը պատասխանում էր «կեցցե»-ներով և «ուռա»-ներով և հայ զինվորաց աղաղակին խառնվում էր բազմաթիվ հանդիսատես ժողովրդի հրճվանաց ձայնը»[8]:

Աշտարակեցին իր հայրենասիրական գործունեության համար արժանանում էր կայսրի մասնավոր երախտագիտության: Այս առթիվ կայսերական հրովարտակը մեծ հանդիսությամբ կարդացվում էր Թիֆլիսի Վանքի եկեղեցում, ուր և խանդավառ ճառով հանդես է գալիս Աշտարակեցին:

1827 թվականի մայիսի 15-ին, Երկրորդ Ծաղկազարդի օրը, Վանքի Մայր եկեղեցում տեղի է ունենում զորքերի ու «Հայոց զինվորության ինքնակամ-կամավորականագնդի» երդման հանդիսավոր արարողությունը, բազում ռուս զորավարների ներկայությանը և Աշտարակեցու նախագահությամբ, ինչպես նաև դրոշակների օրհնությունը:

1827 թվականի ձմռանը Աշտարակեցին անթիվ նամակներով ավետում էր ողջ հայության Հայաստանի ազատագրության լուրը. **«Հասավ ժամը,—գրում էր նա,— երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը: Հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնե յուր վաղեմի անկախությունը: Ոտքի՛ կանգնեք, հայո՛ց քաջեր, թոթափեցե՛ք պարսից լուծը, ուրախացրե՛ք այեզարդ Մասիսին, մի անգամ ստրունով ներկեցեք հայրենի հողերը և ապա ապրեք ազատ... ժամ է արդեն, օ՛ն անդր, հիմա՛ կամ երբե՛ք»:**

1827 թվականի գարնանը ռուսական բանակն ու հայագունդը անցնում էին հարձակման:

Աշտարակեցին «արշավանքների ժամանակ լինում էր ռուսական գնդերում, ուղեկ-

[8] **Ալեքսանդր Դ. Երիցյանց**, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն և կովկասահայք, Թիֆլիս, 1894, մասն Ա., էջ 271—272:

ցում նրանց և դժվարին պայմաններում գործում անձամբ»[9]:

Հայ կամավորական գունդը բոլոր ճակատամարտերում միշտ բարձր պահեց իր անունն ու փառքը:

Աշտարակեցին հոգում էր նաև ռուսական բանակի պարենավորման կարևոր գործը:

## ՕՇԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

1827 թվականի հունիսի 8-ին, Էջմիածինը գրավվում է ռուսական բանակի կողմից: Պարսիկները մեծ պարտություն են կրում: Մայր Աթոռի միաբանությունը եկեղեցական թափորով և Մայր տաճարի զանգերի ղողանջի ներքո դիմավորում է հաղթական զորքին: Ռուսական բանակի հետ էր նաև Աշտարակեցին, իր 1200 հայ կամավորներով:

1827 թվականի օգոստոսի 15-ին Աբբաս-Միրզան 30 հազար զորքով, Սարդարապատի ուղղությամբ Արաքս գետը անցնելով, հարձակվում է Էջմիածնի վրա, որտեղ մի գումարտակ էր թողնվել Էջմիածնի պաշտպանության համար: Գումարտակի զինվորներից 700 հոգի ծանր վիրավորներ էին, որոնք վայելում էին միաբանության և ժողովրդի սրտաբուխ հոգածությունը:

Երևանյան արշավանքի մասնակից, գեներալ Կրասովսկին վկայում է, որ **«Աբբաս-Միրզայի գլխավոր մտադրությունն էր, Էջմիածինը նվաճելով, այն հիմն ի վեր ավերի...** հետո... բոլոր ուժերով Գյումրիի վրայով ներխուժի Վրաստան... և որից հետո Ղարաբաղի նահանգի միջով Ադրբեջան վերադառնա»[10]:

Մայր Աթոռի վրա ծանրացել էր իրական վտանգի մղձավանջը:

Բայց, հակառակ ծանր կացության, Էջմիածնում ռուսական գումարտակը և հայ կամավորները հերոսական դիմադրություն են ցույց տալիս թշնամուն: Աշտարակեցին դիմում է գեներալ Կրասովսկուն, որը Արագածի լանջերից օգնության է հասնում Էջմիածնի ռուսական կայազորին: Գեներալ Կրասովսկու փոքրաթիվ զորքի մեջ սկսել էր համաճարակ, Երևանյան արշավանքի նախօրյակին անտանելի շոգի և խմելի ջրի բացակայության պատճառով:

Օգոստոսի 17-ին, «դաժան մարտերի օրը», Օշական գյուղի մոտ պարսկական զորքերը գերազանց ուժերով հանկարծակի շրջապատում են ռուսական զորքերին: Աբբաս-Միրզան առաջարկում է Կրասովսկուն և Աշտարակեցուն հանձնվել: Նրանք մերժում են այդ առաջարկը և քաջությամբ ընդունում անհավոր և անհավասար մարտը: «Մահը գերադասում ենք ամոթալի գերությունից»: Սկսվում է անհավասար, արյունոտ ճակատամարտը: Ռուսները կռվում էին գերազանց քաջությամբ և անձնվիրաբար: Կտրում-անցնում են պարսիկների պաշարման երկաթե աքցանը, 1131 զոհ տալով, իսկ պարսիկների կորուստները շատ ավելի մեծ էին[11]:

Օշականի ճակատամարտով փրկվում է Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Միաբանությունը Աշտարակեցու գլխավորությամբ, եկեղեցական թափորով և զանգերի հաղթական ղողանջով դիմավորում է դարձյալ իր ազատարարներին:

Օշականի հաղթական ճակատամարտի հիշատակին 1834 թվականի օգոստոսին Էջմիածնից 4 կմ հեռավորության վրա, Օշականի ճանապարհի եզրին, Աշտարակեցու ջանքերով և Մայր Աթոռի միջոցներով կանգնեցվում է մի կոթող, որպես հայ ժողովրդի և Մայր Աթոռի երախտագիտության կենդանի խոսք, հայ-ռուս ժողովուրդների բարեկամության խորհրդանշան՝ հավերժացնելու համար Օշականի ճակատամարտում զոհված ռուս զինվորների և հայ կամավորների հիշատակը (Տես այս մասին Վեհափառ Հայրապետի խոսքը հոկտեմբերի 3-ին, Էջմիածնի հուշարձանի առաջ արտասանած, «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 10): Օշականի ճակատամարտի մասին տես նաև պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի բովանդակալից հոդվածը՝ «Ценный первоисточник об Ошаканской битве», Պատմա-բանասիրական հանդես, 1978, № 1, էջ 241—243):

## ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Օշականի ճակատամարտը վճռական նշանակություն է ունենում ռուսական զորքերի Երևանյան արշավանքների հաջողության համար:

Աբբաս-Միրզան, պարտվելով Օշականի ճակատամարտում, խուսափում է նոր և անհաջող կռիվներից և իր զորքերով անցնում է Արաքսի աջ ափը:

Սեպտեմբերի 13-ին ռուսական զորքերը պաշարում են Սարդարապատի բերդը: Այն գրավվում է 1827 թվականի սեպտեմբերի 20-ին: Սարդարապատում պաշարված հայերը, Աշտարակեցու կոչով, բացում են բերդի դռները ռուսների առաջ և ստիպում Հասան խանին անձնատուր լինել:

1827 թվականի սեպտեմբերի 23-ին ռուսական զորքերը կանգնել էին արդեն Երե-

[9] Գ. Ա. Գալոյան, նույնը, էջ 195:

[10] Նույնը, էջ 197:

[11] Նույնը, էջ 197:



Երևանի բերդի հանձնումը. 1827 թ. հուլիս 7
(գործ՝ նկարիչ Մաշկովի)

վանի բերդապարիսպների տակ: Ռուսական զորքերի հետ այստեղ էր նաև Աշտարակեցին, իր կամավորական ջոկատով:

Սեպտեմբերի 24-ին սկսվում է Երևանի բերդի պաշարումը:

Պարսիկները բռնի կերպով Երևանի բերդը էին տարել Արարատյան դաշտից բազմաթիվ հայ ընտանիքներ, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության մի մասը:

Աշտարակեցին իր կապավորների միջոցով կապ էր հաստատել դժբախտ բանտարկյալների հետ և նրանց միշտ հուսադրում և քաջալերում էր շուտափույթ ազատության մասին, թելադրելով ապստամբվել պարսիկների դեմ և բանալ բերդի դռները:

Աշտարակեցին հայրենասիրական կոչեր էր ուղարկում Էջմիածնի, Օշականի, Աշտարակի հայությանը՝ անհապաղ օգնելու ռուսական բանակին.

«Գրում եմ բազմաթիվ օրհնություններով, որպեսզի գրությունս ստանալուն պես, առանց բոպե կորցնելու, թողնեք ձեր տանը և ընտանիքին վերաբերող բոլոր կարևոր գործերը, թվանք ունեցող և չունեցող և հետևակ կտրիճ տղաներ շտապ հավաքել և այսօր, սեպտեմբերի 28-ին, չորեքշաբթի օրը, մինչև արեգակի մայր մտնելը հասցնել այստեղ մեզ: Եվ եթե ձեզանից որևէ մեկը ծուլանա և ուշանա, այդպիսին թող իմանա, որ թեկուզ իմ աչքի լույսը լինի, չեմ խնայի հանել և դեն նետել»:

Սեպտեմբերի 30-ի գիշերը 40 թնդանոթ մինչև լույս ռմբակոծում են բերդը, քանդում պարիսպները: «Երևանի բերդը ծխումը կորավ: Հինգ օր, հինգ գիշեր սար ու ձոր դմբում, դմբդմբում էր... Էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել», գրում է Աբովյանը:

Հոկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 8-ին, ռուսական զորքերն ու հայ կամավորական ջոկատը հաղթականորեն մտնում են Երևանի բերդը: Վերջապես ընկնում է Հայաստանում պարսկական դարավոր բռնակալության վերջին և ամենակարևոր հենակետը:

Ժողովուրդը պահանջում էր Աշտարակեցուց հոկտեմբերի 1-ը հայտարարել ազգային տոն, որպես Հայաստանի փրկության օրը:

Երևանի բերդի ավելի քան 3 հազարանոց պարսկական կայազորը, Աբբաս-Միրզայի գվարդիական գումարտակը, Հասան խանը, բերդի պարետ Ավա Ղուլի Խանը, Մասանդի, Այրումի, Թավրիզի և այլ խաները գերի են վերցվում, և գրավվում է մեծ ռազմավար[12]:

«Նշանավոր Երևանը,—գրում էր ցարին գլխավոր հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչը,—որի նվաճումը, ինչպես կարծում էին, պետք է կատարվեր արյան գետերի գնով, ռուսական հաղթական զենքի առաջ ընկավ առանց մեր կողմից մեծ զոհողությունների... Ամբողջ պաշարման ժամանակ ռուսներից սպանվել է 52 մարդ, երկու սպա վիրավորվել է, մեկը՝ սպանվել»[13]:

Երևանի բերդի գրավումը և հայոց մայրաքաղաքի ազատագրումը պարսկական դարավոր լծից համարվում էր Հայոց աշխարհի ազատության խորհրդանշան: Այն ժամանակ հայրենասիրական, քաղաքական, տնտեսական մեծ նշանակություն ուներ հայ ժողովրդի համար, որը օրհնանքի խոսքերով և երջանկության արցունքներով էր դիմավորում իր ազատարարներին:

Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանի» վեպում, նկարագրելով Երևանի Սարդարի բերդը, որպես մի հրեշավոր տանջարան հայ ժողովրդի համար, գրում էր. «Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանա բերդի առնիլը հայերի համար»: Ռուսական զորքերը, հայ կամավորները «մըտան բերդը», վկայում է Աբովյանը, «որ Հայոց աշխարհքի ազատության տոնը կատարեն»:

Երևանյան արշավանքի մասնակից դեկաբրիստ Ե. Լաչինովը, որը աչքի էր ընկել և՛ Օշականի ճակատամարտում, և՛ Երևանի բերդի գրավման ժամանակ մարտական իր քաջագործություններով, որպես ականատես վկայում է. «Անհիշարագրելի են ուրախության այն սրտաշարժ տեսարանները, որոնցով հայ ընտանիքները դիմավորում էին մեզ, երբ մենք բերդը մտանք... իսկ Երևանում հայ բնակիչները ռուս զինվորներին հյուրասիրում էին սպիտակ և դեղնա տաք հացով ու գինիով... հուզիչ էր ազատագրված հայերի հրճվանքը, որ նրանք արտահայտում էին հոգով ու սրտով...»:

1827 թվականի հոկտեմբերի 12-ին Թիֆլիսից հայրենասեր Հարություն վարդապետ Այամդարյանը, Մոսկվայի Լազարյան ճեմարանի նախկին դասախոս, 1824—1828 թվականներին Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրանոցի տեսուչ, գրում էր Աշտարակեցուն, Երևանի գրավման առթիվ. «Շնորհավորում եմ Հայաստան աշխարհի փրկությունը, անգութ պարսիկների երկաթե հնոցից»:

Կալկաթայից Մեսրոպ Թաղիադյանը, շնորհավորելով երևանցիների ազատագրությունը, գրում էր. «Աչքերդ լույս, որ մեր

[12] Նույնը, էջ 200:

[13] Նույնը, էջ 199—200:

քաղցր աշխարհքն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց... երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունն, սիրտս ուրախությամբ վառվեց»:

Բովանդակ հայ ժողովուրդը ամեն տեղ, բոլոր գաղթօջախներում խանդավառության և երախտագիտության անհառն զգացմունքներով ողջունեց Երևանի գրավումը:

Խաչատուր Աբովյանը առաջինն էր, որ հայության սրտագին զգացմունքներն էր արտահայտում այս առթիվ գրելով. **«Օրհնըվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ,** ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրից հալածեց»:

Ե. Լաչինովը իր գրառումներում նշել է դարձյալ. «Հուզիչ է ազատագրված հայերի հիացմունքը՝ սրտաբուխ են այն արտահայտությունները, որոնց միջոցով նրանք դրրսևորում են այդ հիացմունքը, իրենց երկիրը նմանեցնելով այն ազատ տանը, ուր այժմ ամեն ինչ համակված է բերկրանքով: Նրանք պատմում են, թե հնուց ի վեր մահացող հայերը իրենց զավակներին կտակել են զանգերի ուրախ ղողանջով գերեզմանում իրենց լուր հայտնել, երբ հայերի համար կծագի երջանկության արևը, երբ ռուսները կազատագրեն նրանց ծանր լծից և ի մի կհավաքեն Հայաստանի աղետալի ցրրված զավակներին. և նրանց համար հասել է այս բաղձալի ժամը և ազատարարներն այցելում են մահացածների գերեզմաններն ու նրանց ազդարարում կենդանի մնացածների բարեբախտության մասին»[14]:

«Իզուր կփորձեի նաև պատկերել ազատարարներին ուղղված նրանց ուրախության և երախտագիտության սրտաշարժ նշանները, այլևս չխոսելով տղամարդկանց մասին, որոնք մոտենում էին մերոնց, խոնարհվում, խաչակնքում էին և ամեն կերպ արտահայտում իրենց շնորհապարտությունը, և կանայք այդ պահերին մոռանալով փաթաթվել իրենց ծածկոցների մեջ, բառերով ու նշաններով ջանում էին նույնն ասել, մարդկանց կողմից սահմանված պատշաճությունները կորցնում են իրենց իշխանությունը, երբ սիրտն է խոսում...

Նրանք իրենց հանձնել են մեր պաշտպանությանը, մենք տեսել ենք նրանց լիակատար վստահությունը դեպի ռուսական բնավորությունը...»[15]:

Հոկտեմբերի 2-ին, կիրակի օրը, Երևանի պարիսպի առաջ Պասկևիչի և բոլոր ռուսական բանակի ներկայությամբ Աշտարակեցին մեծ հանդեսով գոհաբանական մաղթանք է կատարում... մինչ թնդանոթները ավետում էին Էջմիածնի և Երևանի հայկական նահանգների կազմությունը ռուսական հովանավորության և տիրապետության ներքո, և կայսրի անվան ու տիտղոսների վրա ավելանում էր նաև Հայաստան անունը:

Երևանի գրավումից հետո Էջմիածնի և Երևանի համար կազմվում էր ժամանակավոր երկրամասային մի վարչություն, Աշտարակեցու բարեկամ, զորավար Կրասովսկու գլխավորությամբ: Երկրամասային այդ վարչությանը մասնակցում էր նաև, որպես խորհրդական, Աշտարակեցին:

Երևանի գրավումը նոր փառք և անուն բերեց Աշտարակեցուն:

1828 թվականի հունվարի 26-ին Աշտարակեցին Նիկոլայ Ա կայսրի կողմից պարգևատրվում էր Ալեքսանդր Նևսկու առաջին կարգի շքանշանով:

Այս առթիվ Աշտարակեցուն ուղղած իր ուղերձում կայսրը նշում էր. «Վաղուց ի վեր և շատ դեպքերում Դուք ցույց եք տվել Ձեր անկեղծ ջերմեռանդությունը դեպի Ռուսիան և մանավանդ Պարսկաստանի հետ ներկա պատերազմի ժամանակ... Դուք մեր զորքերի հետ բազմիցս մասնակցեցիք մարտերին՝ վտանգի ենթարկելով Ձեր անձը...»:

1828 թվականի փետրվարի 10/24-ին Թուրքմենչայի դաշնագրով ավարտվում էր Ռուսաստանի և Պարսկաստանի միջև պատերազմը:

Այդ դաշնագրով Ռուսաստանին են միացվում Երևանի և Նախիջևանի խանությունները:

Դաշնագրի 15-րդ հոդվածով Պարսկաստանի հայությանը թույլատրվում է մեկ տարվա ընթացքում ներգաղթել հայրենիք:

Թուրքմենչայի դաշնագրի կնքումը սկզբունքային նշանակություն ուներ հայ ժողովրդի համար... պայմանագրի սկզբնական նախագծում, որը մշակվել էր Պետերբուրգում, Հայաստանի մասին պայմաններ չէին նշված: Այդ պայմանները առաջադրվել էին Ներսես Աշտարակեցու կազմած «Գրառումներ հայերի մասին հաշտության բանակցություններում մտցնելու համար» փաստաթղթերում»[16]:

Աշտարակեցու առաջադրանքները Թուրքմենչայի դաշնագրի կնքման բանակցություններում վճռական աշխատանք կատարող Աշտարակեցու և հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Ա. Ս. Գրիբոյեդովը ջերմորեն պաշտպանում էր:

«Թուրքմենչայի համաձայնագրի այն հոդվածները, որոնք պաշտպանում էին հայ ժողովրդի շահերը, հենց նրա (Ա. Ս. Գրիբո-

[14] Նույնը, էջ 202:

[15] Նույնը, էջ 213:

[16] Նույնը, էջ 206, 207;

յեդովի) կողմից՝ էին կազմվել»[17], Աշտարակեցու խնդրանքով և առաջարկով:

Պարսկական կողմը հաճությամբ չէր նայում իր երկրից հայերի ներգաղթին դեպի Հայաստան: Անհերքելի բազում փաստեր կան, որոնք վկայում են, թե պարսկական իշխանությունները մեծ արգելքներ էին հարուցում պարսկահայերի ներգաղթի դեմ:

Պարսկահայերի ներգաղթը կազմակերպելու առթիվ հաստատված հանձնաժողովի անդամ, հայազգի գնդապետ Լազարյանը վկայում է.

«Չնայած այս բոլոր խոչընդոտներին, ավելի քան 8 հազար հայ ընտանիքներ իմ կողմից տեղափոխվեցին ռուսական տարածք՝ նորերս նվաճված Հայկական մարզ: Հայերը անկեղծորեն ցանկանում էին տեղափոխվել, բայց նրանց ամբողջ ունեցվածքը կազմված էր տներից, պտղատու այգիներից և հիանալի մշակված դաշտերից... Պարսկական կառավարությունը գաղտնի կերպով արգելել էր իր հպատակներին գնելու այդօրինակ ունեցվածքները և ենթադրում էր դրանով հայերին պահել իրենց տեղերում: Իսկ եթե, չնայած դրան, նրանք ցանկանան տեղափոխվել, ապա կառավարությունը նրանցից հետո մնացած անշարժ գույքը կստանա ձրի»:

Պարսկական որոշ շրջանակներ «... մեծագույն ատելություն էին տածում դեպի վերաբնակվողները, նրանց ուղեկցում հայհոյանքներով, իսկ մի շարք տեղերում՝ նույնիսկ քարկոծում... Կառավարությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնում իր հպատակների կատաղի արարքների վրա, թերևս հույս ունենալով, թե դա կսարսափեցնի հայերին և նրանց ետ կպահի տեղափոխվելուց...»: Միաժամանակ Լազարյանը ընդգծում էր, որ «հայերը աննկարագրելի ցնծությամբ և մեծ վստահության դրսևորմամբ» ընդունեցին ռուսական ներկայացուցիչներին: Պարսկական իշխանությունները հայերին ահաբեկում էին, թե Ռուսաստանում նրանց ճորտեր կդարձնեն, իսկ երիտասարդությանը բանակ կքշեն»:

«...Դեպի Ռուսաստան հայերի տեղափոխումը կազմակերպելու, ինչպես նաև Պարսկաստանում նրանց շահերը պաշտպանելու գործում մեծ դեր խաղաց Ա. Ս. Գրիբոյեդովը: Իր նամակներից մեկում նա հայտնում էր. «Մեզ մոտ են անցել 8000 հայ ընտանիքներ, և ես այժմ նրանց թողած ունեցվածքի պատճառով գիշեր ու զոր հանգիստ չունեմ, պահպանում եմ նրանց ունեցվածքը և նույնիսկ եկամուտները. ամեն ինչ մի կերպ արվում է ըստ իմ ասածի»[18]:

Թուրքմենչայի դաշնագրով 40.000 պարսկահայ գաղթականներ (ավելի քան 8.000 ընտանիք) հաստատվում են Հայաստանում, հիմնականում Երևանում, Նախիջևանում և Ղարաբաղում:

Պարսկահայության ներգաղթը հայրենիք հայրենասիրական, քաղաքական, տնտեսական մեծ նշանակություն ունեցող նախաձեռնություն էր, որի իրականացման գործում դարձյալ մեծ դեր կատարեց Աշտարակեցին, Հայաստանը հայերով վերաբնակեցնելու ուղղությամբ:

Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումը հնարավորություններ ստեղծեց վերականգնելու Հայաստանի քայքայված տնտեսությունը:

Պարսկահայերի ներգաղթը կազմակերպելու համար Աշտարակեցու առաջարկով հաստատվում է մի հանձնաժողով, որի կազմում էին Մայր Աթոռի ներկայացուցիչներ Ստեփանոս եպիսկոպոսն ու Նիկողոս վարդապետը, ինչպես նշվեց նաև՝ հայազգի գնդապետ Լազարյանը:

1828 թվականի գարնանը սկսվում է պարսկահայերի ներգաղթը Թավրիզի, Մակուի, Սալմաստի, Ուրմիայի, Խոյի գավառներից:

Պարսկահայությունը ազատագրված Հայաստանում, փրկվելով պարսկական գերությունից, հայրենի հողում ձեռնամուխ է լինում ստեղծագործ, շինարար աշխատանքի:

Այս հոդվածի նպատակից դուրս է խոսել Ներսես Աշտարակեցու Թիֆլիսի, Բեսարաբիայի առաջնորդական պաշտոնավարությանց, նրա կրթական-մանկավարժական բեղուն գործունեության, Ներսիսյան հոգևոր դպրանոցի հաստատման (1816՝ ուսումնական նոր շենքի կառուցումը և բացումը՝ 1824) և 1843—1857 թվականների հայրապետական գործունեության մասին, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի[19]:

1857 թվականի փետրվարի 13-ին Թիֆլիսում, 87 տարեկան հասակում, կեսգիշերին, իր գրասեղանի առաջ նստած, գրիչը ձեռքին, կաթողիկոսական իրավունքների մասին ներքին գործոց նախարարին պաշտոնական մի նամակ գրելիս, մահանում էր Աշտարակեցին:

Փետրվարի 27-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում կատարվում էր մեծանուն և հայրենասեր Հայրապետի վերջին օծումը:

Աշտարակեցու աճյունը ամփոփվում է

---

[17] Նույնը, էջ 207, 208:

[18] Նույնը, էջ 208:

[19] Այս մասին տես **Ա. Հատիտյան**, Ներսես Ե Աշտարակեցի, «Էջմիածին» ամսագիր, 1970, № Թ, էջ 22—40:

Թուրքմենչայի դաշնագրի ստորագրումը
(Ղարաբաղ, 1928 թ. փետրվար 10. գործ՝ նկարիչ Մաշկովի)

Մայր տաճարի զանգակատան հարավային կողմում, Դանիել կաթողիկոսի շիրմի մոտ: Աշտարակեցու շիրմի վրա կա հետևյալ տապանագիրը.

**«Պաշտպան հայրենեաց**
**կաթողիկոս Ամենայն Հայոց**
**Ներսէս Ե Աշտարակեցի,**
**ծնեալ ի 13 փետրուարի 1761**
**վախճանեալ ի 13 փետրուարի**
**1857»:**

(Ըստ վերջին ուսումնասիրությունների Աշտարակեցին ծնվել է 1770 թվականին):

1907 թվականին Աշտարակեցու շիրմի կողքին է թաղվում **Նուագող վշտին Հայրենեաց** մեծ Խրիմյանը:

«Ներսես մեծ ազգասեր մը հայտնված էր, իր ժամանակին ամենամեծ ազգային դեմքը, մեծ շինարար մը հանդիսացած էր ելևմտագետ հանճարով, անխոնջ աշխատանքով. մեծ հառաջադիմական մը ճանչցված էր դաստիարակության, կրթության և ուսմանց և գիտությանց համար ցուցուցած ջանքովը և նշանակալի արդյունքով. մեծ բարեկարգիչ մը եղած էր զեղծումներու և անկարգություններու դեմ անաչառ պայքարով և ամեն կողմ կարգ ու կանոնի համար գործածած ճիգերով...»[20]:

«Բազմակողմանի, զարմանալի եռանդով էր այս հոգևորականի երկարատև գործունեությունը: Նա մի հասարակ առաջնորդ չէր, լոկ եկեղեցական գործերով հետաքրքրվող, այլ աչքի ընկնող քաղաքական գործիչ:

ԺԸ դարում մենք ունեինք մի քանի հոգևորական քաղաքագետներ. այսպես են՝ Օրիի ընկեր Մինաս վարդապետը և Գանձասարի Եսայի կաթողիկոսը... ԺԹ դարում Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը և Ներսես Վարժապետյան պատրիարքը»[21]:

1970 թվականին Մայր Աթոռում, Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ, մեծ հանդեսով կատարվեց Աշտարակեցու ծննդյան 200-ամյակը: 1970 թվականի փետրվար 13 թվակիր Իր բովանդակալից կոնդակում Նորին Սուրբ Օծությունը գրում է Աշտարակեցու մասին.

**«Հերոսական մաքառումներու այդ դարաշրջանի սեմին, մեր առջև կբարձրանա պայծառ ու հզոր իմացականությունը Հայրապետի մը, որ գիտցավ ս. Էջմիածնի ոգեկան կատարներուն հասնիլ և այդ բարձունքեն լուսավորել հոգևոր-ազգային վերածննդի ճամփան, առաջնորդելով իր ժողովուրդը այդ լույսով»:**

[20] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան,** նույնը, էջ 3765:

[21] **Լեո,** Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902, էջ 13: